



ԲԱԶՄԱՎԷՊ

ՌԵԺԵՆ. 1866 — ՔՍԱՆԵՐՈՐԴ ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ. — ՓԵՏՐՈՒԱՐ

ՅԵՂԱՓՈԽ ՈՒԹԻՒՆԻՐ

(Տես սկզբը յերես 3.)

Բայց ինչու փնտռենք պզտի տեսա-
րաններ (եթէ կրնան պզտիկ ըսուիլ
ասոնք), երբ համաշխարհական ջրհեղե-
ղը կը քարոզեն ամեն ազգը, և նոյն ինքն
բնութիւն. որ և ոչ միայն մէկ ջրհեղեղ,
այլ և շատեր գուշակել կուտայ գիտնոց.
որք երբեմն բոլոր երբեմն մասամբ ծած-
կեցին զցամաք. և էր երբեմն բոլոր մեր
աշխարհագրնաին ներսը կրակ, դուրսը
ջուր: Բարձր բարձր լեռանց կողերը և
ինչուան 'ի գագաթունքը գտուած խե-
ցեմորթից քարացեալ պատեաններ և
ձկանց փուշեր, ընդարձակ դաշտերու
հերկուած ատեն ելած ժժմունք, յայտ-
նի վկայ են՝ ծովուն թէ տարածութեան
և թէ բարձրութեանը. թէ և ոչ ամեն
լեռ միշտ իր տեղը կեցած՝ ջրերու այ-
ցելութիւն ունեցեր է, հապա ոմանք ալ
յանկարծ ծովուն կամ գետին ծոցէն
ցաւքեր ելեր կանգնեալ են, ինչպէս են

և կղզիք: — Ասոր հակառակ տեղ տեղ
ալ ծովն քաշուեր հեռացեր է, և իր
ալեզք ծփած վհերուն տեղ ցամաք եր-
կիրն աճեր ձգուեր է, շինութեամբ ծաղ-
կելով: — Օր մը կը պտտէի կանաչ
դաշտի մը մէջ, ուր մշակք և հովիւք
կ'աշխատէին, այն աշխարհքին մէջ ու-
րուն բոլոր եզերքն է ծով, որու տէր և
թագուհի կ'ըսուի հոն բնակող ազգն,
այսինքն է Անգղիա, տեղացի կալուա-
ծատէր մը չորս կողմերը ցուցնելու ա-
տեն՝ տարաւ զիս այն վիճակին հին ե-
պիսկոպոսարանն ալ ցուցնելու: Որ
հիմայ աւերակ ամայի դղեակ մ'էր, բո-
լորչի աշտարակն ալ վերէն վար ճա-
թած. միացորդ մ'այն եպիսկոպոսա-
րանաց՝ որք յառաջ քան զնորադան-
դութիւն՝ ծաղկէին հռոմէական ուղ-
ղափառ հովուաց տակ. — հնութեան
տեսարանէն աւելի զարմանք տեսայ

բարեկամին ցուցած քանի մը մեծ և հին երկրթէ օղակները՝ դրեկին արտաքին պատերուն ստորոտը . և իմացայ որ ուրիշ բանի համար չէին՝ բայց եթէ նաւերը կապելու, երբ ծովն կու գար կը հասնէր և կը ծեծէր մինչև այն պատերը . իսկ հիմայ և ոչ իսկ կը տեսնուէին անոր հեռաւոր ալիքն: . . .

Ով որ տափակ ծովեզերը մը կ'երթայ՝ կը տեսնէ ծովուն անդադար գալ ՚ի ցամաք վազելը, և նորէն յետ դառնալը . մշտնջենաւոր խաղ մը կ'երեւի այս՝ ծովու և ցամաքի . սակայն խաղն միշտ խաղ չիմնար . շատ հեղ մէկն կամ մէկան կը յաղթեն . կամ ծովն ՚ի ցամաք, կամ ցամաքն ՚ի ծով կը փոխուի . — ցամաքն կը ցուցնէ մեզի վերոյիշեալ ծովային կենդանեաց մնացորդներն իր չոր յատակին կամ կողերուն վրայ, և կը զարմացնէ զմեզ . իսկ ծովն, որչափ ցամաքային մնացորդներ ունի իր անդունդոց մէջ՝ զոր չենք կրնար տեսնել . բայց անշուշտ շատ աւելի զարմանալի են, վասն զի մեզի ծանօթագոյն կենդանեաց և մարդկան և շինուածոց մնացորդք են: — Ժ դարուն սկիզբները մեր Արծրունի Գագիկ թագաւորն զարմանալի չէներ չինած է Աղթամարայ կղզւոյն մէջ (Ոստանի եզերքը) . ասոնց բարձրագոյն մասն միայն մնացեր է հիմայ, իսկ շատը ծածկուած է ՚ի ծովէն վանայ, և երբեմն լրերուն հանդարտութեան և յստակութեան ատեն կ'երևան ստորասուզեալ պատեր և շինուածներ:

Ասոնք և ասոնց նման յեղափոխեալ նշխարք հազարամեայ դարուց՝ աւելի կը զարմացնեն զիս, քան թէ Բասենու և Ալաշկերտի ընդարձակ հացաբեր դաշտերուն մէջ գտուած հողաբեր ժամակըն, որոց նմանքն դեռ կենդանի կը շարժին կը կայտուին Կաղբից կամ Պոնտոս ծովուց յատակին վրայ: Եւ ոչ այնչափ կը զարմանամ Սիպրիոյ սառնապատ անապատաց ծածքէն դուրս հանուած երկայնակնճիթ ժանեւոր մնամուռք փղաց՝ դեռ ամբողջ և մազոտ դիականց վրայ, կամ Գաղղիոյ, Անգլիոյ և Պելճիոյ և ուրիշ ասոնց նման աշ-

խարհաց հողերուն և քարայրերուն մէջ գտուած դազանաց կմախքներուն, որոնց շատէն և ոչ մէկ հատ կենդանի կը գտուի հիմայ բոլոր Եւրոպիոյ մէջ, որչափ կ'ափշիմ և հիանամ երբ կը տեսնեմ այն տեսակ մը ամենամեծ և ամենաշարժ կենդանեաց կմախքը, երբեմն չէն՝ և շատ հեղ անչէն կողմերու կամ անապատներու մէջ ընկած և տարածուած մղոնաչափ երկայնութեամբք . որոց ոմանց կիսակոտոր եղջիւրնին դեռ չըջակայ ծառերէն վեր կը բարձրանան յերկինս, որ զանոնք անխնամ անհոգ թողած կը կարծուին: . . . Այս մեծակրմախ անկենդան կենդանիներն կ'անուանին՝ Բաբելոն, Նինուէ, Մեմփիս, Թեբէ, Կարբեդոն, Պերսեպոլիս, Պապպէք, Պալմիրա, Արմաւիր, Արտաշատ, Տիգրանակերտ, Դուին, Բագարան, Անի, և այլն, և այլն, և այլն . որք Այրարատայ և Սենաարայ դաշտերէն ինչուան նոր աշխարհի Մեխիկացւոց դաշտերուն մէջ կը գտուին . այն եղջիւրանման բարձրաշտարակ կենդանաբոյն կենդանիքն, որք այսօր կոչուին աշխարհ և դերթոռիք քաղաքաց և մայրաքաղաքաց, երբեմն մեղուաց փեթակէն աւելի կ'եռային զեռային մարդկութեամբ . նմանք, աւելի կամ պակաս՝ հիմակուան Բաբելոն, Լոնտոնի, Ստամպոլի, Բեզերպուրկի, Փէքլինի, և այլն . — մինչև ցայսօր կ'երևին անոնց պահարան պարիսպներ և աշտարակները . անոնց զօսանաց և զբաղանաց երթեկեկաշատ հրապարակքն, խանք, իջևանք և փրնդուկք . անոնց զեղխութեան և զբանաց բոյն՝ պալատք և թատերք . անոնց՝ աւելի պաղ ձեռքով քան տաք սրտով չինած պաշտամանց տեղիքն, տաճարք և եկեղեցիք . անոնց կոխած, և մըջեանց շարից պէս՝ իրարու ետեւ գացած դարձած երկայն ու ծուռ ճամբաներ և փողոցներն, ուսկից հազարաւոր տարիներ բիւր բիւր և միլիոն մարդիկ անցան . . . և հիմայ ուրիշ բան չենք կրնար ըսել, բայց եթէ անցեր գացեր են, և ուրիշ նշան մը չէ մնացած՝ բայց թէ աւերակն իրենց բնակութեան, ուր իբրեւ իջևանի

մը մէջ՝ ազգէ ազգ որդիէ որդի մտեր, նստեր և մեռեր են. այսօր՝ շատին և ոչ գերեզմանը, գուցէ և ոչ ոսկորներն կան. այլ միայն հնութիւն և մոռացութիւն կը թափառին հոն 7—800, կամ երկու իրեք հազար տարիներէ վեր. և միայն դաղանք, օձք և կարիճք կրնան անոնց յաջորդ բնակիչ ըսուիլ. միայն վայրն և կանչիւն բուռց և գաղանաց կը լսուի հոն. միայն հովերուն սոււելն, ջրերուն անհոգ և անպէտ սահիլ անցնիլն. երբեմն երբեմն ալ աւազակաց պահուըտին, կամ հովուաց և հօտից ապաստանիլն (եթէ դեռ մարդամտի տեղ են), և քիչ անգամ մը հետաքրքիր հնասիրի և ճամբորդի մը այցելութիւնն՝ իր հին և անծանօթ պապերուն կամ անոնց ժամանակակցաց ապրած տեղերուն։

Ո՛հ, ինչ աշխարհներ փոխուեր են մեր աշխարհին վրայէն. ինչ ազգեր եկեր կեցեր անցեր են երկրիս հիմակուան ազգերէն առաջ. — ամբողջ մեծ և այլալեզու ժողովուրդք՝ իբրև մէկ մէկ անհատ մարդիկ մարեր մեռեր են. 2000 տարի քող տէրութիւնք՝ իբրև կառչէն տնակ մը փլեր հիմնայատակ են եղեր. անոնց աւերակաց վրայ՝ նոր քաղաքներ կանգնուեր, նոր ազգք կոխեր, նոր լեզուներ լսուեր են. և կայ տեղ ուր տակէ տակ երկու իրեք մէկմէկէ հին և անծանօթ քաղաքաց կմախք յայտնուած է։ — Ո՛ւր են այն արևելքի տիեզերակալ տէրութիւնք Ասորեստանայց, Բաբելոնաց, Մարապարսից և Մակեդոնացուց. ո՛ւր իրենց Նեղոս գետոյն պէս հին՝ եգիպտացուց բազմացեալ հարստութիւնքն, և բրգաշէն փարաւոնքն. — ո՛ւր Յունաց, փոքր Ասիոյ, Միջագետաց և Ասորաց հարիւրաւոր թագաւորութիւնքն... Եթէ հիմայ երկրիս բնակիչքն աւելի բազմաթիւ են քան հին ատեններ, չեմ գիտեր. բայց կարծեմ՝ թէ առաջ հիմակուրնէ աւելի շատ տէրութիւնք և ժողովուրդք կային, և կրնանք թերևս հաշարով համրել զանոնք... Սակայն ինչ եղան, ո՛ւր գացին, ո՛ւր ծածկուեցան այնքան ջորութիւնք և մեծութիւնք երկրի. որք ոչ ուժով և ոչ թուով տրկարք և սակաւաւորք էին, և ոչ այլ փայլակի պէս յանկարծ երևցան ու ծածկուեցան. այլ շատերն հազարաւոր տարիներ ծաղկեցան, զօրացան, տիրացան, գործեցին, համբաւով լըցուցին զաշխարհս, և երկրիս մեծ մասը նուաճեցին։ Ասորեստանայց և Բաբելոնաց տէրութիւնն 1700 տարուց չափ տևեց ու տիրեց բոլոր արևմտեան Ասիոյ. եգիպտացուցն՝ 2000 տարի. Հռովմայեցուցն և իրենց յաջորդ արևելեան (Կ.Պօլսոյ) կայսերաց մէկտեղ առնելով՝ աւելի քան զ՝2200 տարի։ Յիշենք մեր ազգինն ալ՝ որ անկէ պակաս երկարատև չեղաւ, մանաւանդ թէ Հայկականց և Արշակունեաց իրարու գրեթէ անընդհատ յաջորդութեամբը՝ անոնցմէ ալ երկար՝ իբրև 3000 տարի տևեց, (ի Հայկայ մինչև ցԱրտաշիւր որդի Վռամայազոյ՝ 2922 տարի)։ ... Այնքան տարիներու և դարերու երկայն երկայն թեքերը՝ ժամանակն ու զած վայրկենին՝ իր սուր մկրատովը մէկ շարժմամբ մը կտրեց... ազգք և քաղաքք, բնակիչք և բնակութիւնք ընկան, ծածկուեցան, անհետացան. նոր բնակչաց և նոր բնակութեանց թողուցին իրենց աշխարհը, ինչպէս նոր խաղ մը ձևացրեալ համար՝ նոր դերասանից կը թողուն զթատրը՝ առջի խաղոց դերասանքն։ Այնքան հարիւրաւոր ազգաց միջէն հազիւ ոմանք իրենց հին նշանով մը մնացեր են, մեծամեծ գետերէ բաժնուած պզտիվ տակներու պէս, ինչպէս ենք մենք Հայքս, Յոյնք, Հրեայք, Պարսիքք, և ուրիշ խիստ քիչք։ Թերևս միայն Չինք և Ճեպոնք են՝ որ հին հաշարամեայ դարերէ վեր մնացեր են տէրութեամբ և ազդութեամբ, պատճառաւ հեռաւորութեան իրենց աշխարհին՝ ի խորս և ի ծայրս արևելից. ուսկից որ՝ արեգական պէս՝ ընդհանրապէս ամեն ազգք՝ կիրթք և բարբառովք՝ դէպ յարևմուտս դիմէին և թափէին, և մինչև ցայսօր նոյնը կ'երևի, եթէ լաւ դիտենք. ոմանք իրենցմէ անդին եղողը նուաճելու համար, ոմանք ալ

կրի. որք ոչ ուժով և ոչ թուով տրկարք և սակաւաւորք էին, և ոչ այլ փայլակի պէս յանկարծ երևցան ու ծածկուեցան. այլ շատերն հազարաւոր տարիներ ծաղկեցան, զօրացան, տիրացան, գործեցին, համբաւով լըցուցին զաշխարհս, և երկրիս մեծ մասը նուաճեցին։ Ասորեստանայց և Բաբելոնաց տէրութիւնն 1700 տարուց չափ տևեց ու տիրեց բոլոր արևմտեան Ասիոյ. եգիպտացուցն՝ 2000 տարի. Հռովմայեցուցն և իրենց յաջորդ արևելեան (Կ.Պօլսոյ) կայսերաց մէկտեղ առնելով՝ աւելի քան զ՝2200 տարի։ Յիշենք մեր ազգինն ալ՝ որ անկէ պակաս երկարատև չեղաւ, մանաւանդ թէ Հայկականց և Արշակունեաց իրարու գրեթէ անընդհատ յաջորդութեամբը՝ անոնցմէ ալ երկար՝ իբրև 3000 տարի տևեց, (ի Հայկայ մինչև ցԱրտաշիւր որդի Վռամայազոյ՝ 2922 տարի)։ ... Այնքան տարիներու և դարերու երկայն երկայն թեքերը՝ ժամանակն ու զած վայրկենին՝ իր սուր մկրատովը մէկ շարժմամբ մը կտրեց... ազգք և քաղաքք, բնակիչք և բնակութիւնք ընկան, ծածկուեցան, անհետացան. նոր բնակչաց և նոր բնակութեանց թողուցին իրենց աշխարհը, ինչպէս նոր խաղ մը ձևացրեալ համար՝ նոր դերասանից կը թողուն զթատրը՝ առջի խաղոց դերասանքն։ Այնքան հարիւրաւոր ազգաց միջէն հազիւ ոմանք իրենց հին նշանով մը մնացեր են, մեծամեծ գետերէ բաժնուած պզտիվ տակներու պէս, ինչպէս ենք մենք Հայքս, Յոյնք, Հրեայք, Պարսիքք, և ուրիշ խիստ քիչք։ Թերևս միայն Չինք և Ճեպոնք են՝ որ հին հաշարամեայ դարերէ վեր մնացեր են տէրութեամբ և ազդութեամբ, պատճառաւ հեռաւորութեան իրենց աշխարհին՝ ի խորս և ի ծայրս արևելից. ուսկից որ՝ արեգական պէս՝ ընդհանրապէս ամեն ազգք՝ կիրթք և բարբառովք՝ դէպ յարևմուտս դիմէին և թափէին, և մինչև ցայսօր նոյնը կ'երևի, եթէ լաւ դիտենք. ոմանք իրենցմէ անդին եղողը նուաճելու համար, ոմանք ալ

իրենց ետեւէն եկողէն հալածուելով և զուրիշները հալածելով, ինչպէս ըրին և մեր ֆ. Ասիոյ և Կիւլիկիոյ Հայք՝ նեղեալք և վարեալք ի թուրքաց՝ ԺԱ. դարուն մէջ և վերջը. իսկ այն զօրաւոր նեղող և նեւտող ազգն՝ միջին Ասիոյ անապատներէն ելլելով՝ հասաւ ինչուան Ասիոյ արևմտեան ծայրը, անցաւ անկէց յեւրոպ և անոր շրթանց վրայ դնելով իր (օսմանեան) գահը, քալեց յառաջ մինչև ի սահմանս Սերուաց, Խուուաթաց և Մաճառաց, և գրեթէ մինչև ի կողմանս Գերմանացոց :

Մարդկութեան պատմական միջոցին 4000 տարուանը մէջ՝ այս հրշափ շատ և մեծամեծ յեղափոխութիւնք քաղաքականք, որը մտացի մարդու համար ամենէն գլխաւոր և հարկաւոր դիտելի և զարմանալի յեղափոխութիւնքն են. և ուրոց վրայ իմ խօսելս կրնար շատ երկայն ըլլալ. այլ բաւական ըլլայ այսպիսի՝ արթնցընելու մտածել ուղղոյն յիշողութիւնը. ով որ քիչ մ'ալ հին պատմութիւն կամ աշխարհագրութիւն սովորած է՝ կրնայ խորհրդածել և իմաստասիրել այս մարդկային քաղաքական կենաց և ընկերութեանց մեծամեծ յեղափոխութեանցը վրայ. որը ոչ միայն իրեն առանձինն, այլ և բոլոր ժողովրդեան և ազգաց ազգու և կարևոր խրատներ կուտան. մանաւանդ եթէ քննելու ըլլայ, թէ ինչու և ինչպէս այս և այն տէրութիւնք կամ ազգք՝ յերևան ելան, ծաղկեցան, զօրացան, անուանի եղան. և ինչու կամ ինչպէս այլք չծաղկեցան, տկարացան, կործանեցան փճացան, անյայտ անյիշատակ եղան. կամ շատ շատ եթէ և զեռ բոլորովին չեն ալ ջնջուած, սակայն ուրիշ ազգաց իշխանութեան, օրինաց, սովորութեան, լեզուի և բաղդի ու բնաւորութեան տակ ընկած են, որովք միշտ կը նուազի սեփական ազգայնութիւնն կամ բնութիւնն... Յայսմ մասին անշուշտ մերազնեայք՝ մեծ մտածութեան ասպարէզ մ'ունին, և թերևս աւելի քան զշատ ազգեր :

Երբ խօսքերնիս և մտքերնիս հոս կը հասնի, ալ դժար և գրեթէ աւելորդ

կ'երևի դառնալ նորէն երկրիս ուրիշ կերպ կերպ յեղափոխութիւնները քննել, կամ նաև երկրէս դուրս ցատքել յանսահման տեղը, և երկինք ըստած բոլորակութեան մէջ ալ յեղափոխութիւններ փնտռել, որոնց նշանները՝ մեր տկար քննութեամբք ալ կը ճամարտին. այսինքն թէ հաստատութեան մէջ ալ անհաստատութիւն կայ, երկնաւոր գընտից մէջ ալ յեղափոխութիւնք կ'ըլլան. թէ և մենք երկրաբնակքս և հեռաւորք՝ հազիւ կրցեր եմք քանի մը նշաններ տեսնել, կամ արեգական և լուսնի բըծերուն, և մոլորակաց մանեակներու և գոյներու այլայլութեամբ, կամ նա յեւրով հարաւային բեւեռին մօտ՝ երկնից ընդարձակ անասող աննշան անապատին վրայ, ուր կարծես թէ աշխարհներ աւրուեր անցեր են, կամ դեռ պիտի շինուին. կամ քանի մը աստեղաց անյայտ ըլլալը, (ինչպէս Կասիովպէն որ լուսնութագի պէս պայծառ էր 1572—3ի միջոց 18 ամիս փայլելով՝ աներևոյթ եղաւ. կամ Օձակալին աստղը՝ որ մեր Հին Զուղայի աւերած տարին (1604—5) անյայտացաւ) : . . . Ասոնք և այսպիսիքս հարեանցի յիշել մը միայն հարկ կը սեպեմ՝ մեր մեծ առաջարկութիւնը հաւաստելու համար, թէ « տիեզերաց » տիրապետող օրէնքն է Յեղափոխութիւն » : Եւ որովհետև, շնորհք և փառք Աստուծոյ, մենք գիտեմք որ այս տիեզերքս կուրաբար չիկառավարիր, բաղդըն կամ հարկն չիկրնար ընել այս բաներս, (որը և իրենց անդադար փոփոխութեանց մէջ զարմանալի կարգ և կանոն մը կը յայտնեն), ըսել է որ իրենցմէ վեր շարժիչ և յեղափոխիչ մ'ունին, որ միայն անշարժ և անփոփոխ ըլլալով՝ զերկինս և զերկիր կը շարժէ կը քշէ, կը տանի մեծ վախճանի մը, կամ հասնունքեան մը. առ որ կը դիմեն ամենայն արարածք, « երկնելով և հեծելով », ըստ առաքելոյն :

Մակայն այս մեծ զանազանութիւնս կայ, որ նիւթականքն և անբանքն գրեթէ միշտ միօրինակ նոյն ճամբով, նոյն կարգով, իրենց բնութեան ներքին կամ

առանձին օրէնքներն անփոփոխ պահելով, միայն ազգովին կը փոփոխին, այսինքն զիրար յաջորդելով մահուամբ և կենդանի. իսկ բանակաւոր, կամ պարզ ևս ըսեմ՝ մարդիկ, թէ և ըստ նիւթական էութեան նման կերպով մը կ'ապրին և կը փոխուին, այլ թէ դարէ դար տարուէ տարի փոփոխութիւններ կ'ունենան նոյն իսկ կենաց տնտեսութեան հանգամանաց մէջ. և թէ ալ աւելին իրենց քաղաքավարութեան կամ ազգային կենաց մէջ:

Դարձեալ, այս ալ կայ, որ անբան արարածք և կենդանիք իրենց որ և է յեղափոխութիւնը՝ միշտ նոյնաչափ ուրոշեալ ժամանակի մէջ կ'ընեն, իսկ մարդկան թէ բնական կենաց չափը շատ փոփոխական և իրարու անհասարար է, և թէ ալ աւելի՝ քաղաքական կենաց յեղափոխութիւնքն ամենեւին ան նմանք իրարու և շատ տարբերք ժամանակաւ: — Եղած են ազգեր, որ հազարաւոր տարի յիշուած են 'ի պատմութեան և դեռ կան ալ, միշտ բարբարոս կամ անկիրթ մնալով. եղած են ալ որ շատ շուտով օրէնք և կրթութիւն առած են, (ինչպէս Եգիպտացիք, հին Պարսիկք, մասամբ իմն և Հայք). ոմանք ինչուան հիմայ ալ իրենց հին հազարամեայ կրթութիւնը և կացութիւնը պահել են, ինչպէս Չինք. շատերը կորուսել են կրթութիւնին ալ, իրենց ինքնակացութիւնն ալ և զրեթէ էութիւնն ալ, (ինչպէս Ասորեստանայք, Մարք, ևն.) ոմանք թէ և գերազանցել են 'ի կրթութեան (որպէս Յոյնք), բայց նորէն նուազել են: Եւ ահա մեծագոյն քննելու և խորատ առնելու դաս մ'են այս այլակերպ և երբեմն ընդդիմօրինակ յեղափոխութեանց պատճառներն. պատճառք՝ որ երբեմն ազգի մը ինքն իր միջէն ելած են, կամ հասարակաց ջանքով և կամ առանձին մարդու մը նոր ու մեծ գործով՝ թէ լաւ թէ չար. երբեմն ալ իր սահմանակից ազգերէն, կամ հեռաւոր և զօրաւոր ազգի մը ազդեցութենէն, ըլլայ բռնութեամբ, ըլլայ բարութեամբ: Պատճառք՝ որք կրնան դարձեալ յե-

ղափոխել զվիճակ ազգաց և շխարհաց:...

Անշուշտ, ով բարեսէր ընթերցող այս տեսութենէն վերջը՝ կը դառնայ միտք մեր ազգին անցեալ քաղաքական յեղափոխութեանց վրայ և կը դադրի հիմակուան տարուբերեալ վիճակին վրայ... կը փափագի կ'ուզէ տեսնել իմանալ թէ այսուհետև կարելի է իրեն ալ նոր յեղափոխութիւն մ'ունենալ, կամ այնպիսի՝ որ քիչ ժամանակի մէջ մեծապէս այլափոխէ իր դրութիւնը, և կամ այնպիսի՝ որ կամաց կամաց բայց շարունակ տանի 'ի նորակերպութիւն. և եթէ աշխարհիս հիմակուան հեղեղաբար անհամբեր ընթացքն՝ որ շոգիով և ելեկտրութեամբ կը փութայ, գրեթէ հարկ կ'ընէ հեղեղաց մէջ եղողին՝ տեսակ մը յեղափոխութիւն, տեսակ մը հասունութիւն, արդեօք կատարելութեան՝ եթէ փոփոխեան հասունութիւն պիտի ըլլայ մերը:...

Քանի որ այս խնդիրը չես լուծած, ես կը մաղթեմ քեզի ալ շատ և շուտ յեղափոխութիւն 'ի հասունութիւն մը տաց, սրտի և հոգւոյ. որ է ըսել առանձինն մարդոյդ, վասն զի այս իսկ է ըսկիզբն և կարևորն առ ամենայն լաւ և օգտակար ազգային կամ քաղաքական յեղափոխութիւն. որ և կ'ըլլայ 'ի ձեռն կրթութեան, ջանից և խորհրդածուլութեան: Ասով առանձինն մարդոյն հետ՝ կը յեղափոխին և մարդիկ, այսինքն ընտանիքն, ընկերութիւնն, ազգն բոլոր:

Արդէն ըսածներէս յայտնի էր որ մարդ երկու բոլորովին իրարմէ տարբեր տեսակ յեղափոխութիւն ունի. մէկն քնակաւ, որով բուսոց և կենդանեաց նման առաջ կու գայ, կ'աճի և կը մեռնի. մէկ մ'ալ թալտոյակաւ, որ է յեղափոխութիւն և աճումն զօրութեանց հոգւոյն, մտքին ու սրտին. ըստ այսմ՝ չէ թէ միայն ուրիշ արարածոց և կենդանեաց չեն նմանիր մարդիկ, այլ և իրարմէ շատ և խիստ շատ կը տարբերին. ոմանք՝ թէ և ըստ հասակի շատ երկարակեաց կ'ըլլան, այլ մոռք միշտ տըղայ. ոմանք՝ հասակաւ տղայք՝ մոռք

կամ՝ (լաւ ես) հոգւով ծերացեալք և հասունացեալք . բսել է որ առջիններու մէջ հոգւոյնցօրութիւնք ոչինչ կամքիչ յեղափոխութիւն ունեցեր են, կամ թէ՛ ի չար կողմն զարգացեր են . իսկ ետքիններուս մէջ՝ շատ և շուտ եղեր են յեղափոխութիւնք, և դէպ ՚ի լաւն : — Ասոնցմէ ու մանք ոչ միայն անձնական հասունութիւն մը ստացեր են, այլ և աշխիւ ջանքով և գործքերով հասարակաց ալ շուտով հասունութեան պատճառ են եղեր օգտակար յեղափոխութեամբ մը . ինչպէս, զանազան ժողովրդոց օրէնս, դիրք կամ աղբային բարերարք, և համաշխարհի օգտաբերքն՝ պիտանի գիտելով և դիւրութեամբք . կամ իմաստունք՝ ուղիղ և կարևոր գիտութեամբք և ծանօթութեամբք : — Ասոնցմէ ոմանք ամբողջ քաղքի, տէրութեան, ազգի մը յեղափոխիչք են եղեր, և կրնանք ըսել թէ այնչափ անդամ ապրեր են՝ որչափից որ օգուտ ըրեր են . և այնչափ երկար կ'ապրին՝ որչափ որ դեռ այն օգուտը կը վայրուի, կամ իրենց ըրած յեղափոխութիւնն՝ դեռ կը տիրէ յաշխարհի՝ ի քաղաքականութեան, յարուեստք և ի դիտութիւնս : Ասոնց հակառակ ոմանք ալ նոյնպիսի մեծ և ազդու գործքերով՝ բայց դէպ ՚ի չարն՝ ըրեր են մեծամեծ յեղափոխութիւններ յընկերութեան և ի քաղաքականութեան, բայց ՚ի քնաս նոյցին և ՚ի կործանումն : Որչափ որ առջիններն են մեծք, գովելիք, պաշտելիք և անմահանալիք, այնչափ ալ տառնք ցածք, պըժգալիք, անիծելիք և անյիշելիք : — (Կըրնաս օրինակի համար մեր ազգային պատմութեան մէջ յիշել այսպիսի հակառակներ . ՏՐԴԱՏ և ԱՂԱԿ Բ. ՎԱՁԷ և Սանտուրոշ . ՆԵՐՍԷՍ և ՄԵՐԻՆԻՍ . ՎՌԱՄՇԱՊՈՒՆ և ԻՐ ՈՐԴԷՆ ԱՂԱՂԱՅԻՐ . ՍԱՀԱԿ և ՍՈՂՈՒՄԱԿ . ՄԵՍՐՈՎՊ և ՄԵՆՈՒՄԱՆ . ՎԱՐԴԱՆ և ՎԱՍԱԿ . ՎԱՀԱՆ և ԳԻՂԻՄ . ԹՈՐՈՍ և ՄԵՆԻ . և այլն) :

Արդ յետ ամենայնի՝ պէտք է յիշենք որ այս յեղափոխութիւնքս կ'ըլլան ՚ի ժամանակի . և ժամանակն ալ իր սահմանն ունի . որ երբ հասնի՝ անժամա-

նակն և յաւիտենականն (Աստուած) պիտի չարժէ բոլոր մարդկութեան մեծարուն ծառք . ամենքն ալ պիտի թափին պտղոց նման, թէ հասուն թէ տըհաս : Մինչև որ գայ այն կէտը՝ անշուշտ մեր ազգին վիճակն ալ պիտի յեղափոխի և թերևս շուտ շուտ ալ . բայց ոչ դէպ ՚ի լաւ կողմը՝ ինչուան որ ես և դու առանձինն չյեղափոխիք ՚ի նոյն լաւն . և մեզի նման՝ ամեն կամ բազմազոյն մերազգիք . . . ինչուան որ շատ մը եզր և դուր՝ յեղափոխեալք ՚ի լաւ՝ չկազմեն հասարակութիւն մը՝ որուն ամեն մէկ անհատն գիտնայ և կատարէ իր պարտքը՝ յօգուտ անձին և ազգին . — և ինչուան որ այն սակաւաթիւ քանի մը եսերն ալ՝ որ դեռ կրնան մեծ գործք ընել, ունենալով՝ (որ և է իրաւամբ) ընդարձակ իշխանութիւն մը, հեղինակութիւն մը, և ազդեցութիւն մը, չդարձնեն ուժերն իրենց առանձնական կամ չափաւորեալ շահէն և նպատակէն դուրս՝ դէպ ՚ի չափ և յօգուտ բոլոր հասարակութեան վրայ : Մանաւանդ որ եթէ ասոր վրայ չընեն բարի յեղափոխութիւն մը, չեն ալ կրնար չընել չար մը . թէպէտ և կրնայ ըսուիլ թէ գոնէ նոյն վիճակին մէջ կը թողուն զհասարակութիւնը, բայց բարոյապէս անհնար է այս . վասն զի եթէ այդ մը նայուն վիճակն՝ չէ յեղափոխութիւն մը՝ հասունութիւն մը դէպ ՚ի բարին, հապա ինչ է . . .

Փ . փ .

Ա Զ Գ Ա Յ Ի Ն Ե Ր Գ Ք

ԲՈՂՆԵՄԱՑ

Կոտորած Սաքաւիւհացոց .

Ո՛վ լուսաբուղիս արեակ, արփի հրաւորոյ, աէր մեր, հիմ այդպէս տխրագինս հայիս ՚ի մեզ . ընդէր առաքես նըշոյս տօգոյնս՝ ՚ի խորտակեալ Բոհեմիացիքս : — Ասա մեզ, յո՛ չոգաւ տարագէմ իշխանն մեր . ասա, ո՛ւր են բա-